ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԿԿ-ԳՀԱՊՁԲ-20/21-8

ք.Եւան «30» 09 2020 թ.

Կադաստրի կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Թովմասյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Սմարթլայն ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Տ. Ղարիբյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի ե) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 26,700,000 (Քսանվեց միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման

ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.10 Պայմանագիրը կազմված է 19 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.11 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.12 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Կադաստրի կոմիտե	Սմարթլայն ՍՊԸ
Արշակունյաց 7	Ք. Երևան Վարդանանց 110
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հայէկոնոմբանկ ԲԲԸ
h/h 900013220042	Հ/Հ 163007031509
ՀՎՀՀ 02534328	ՀՎՀՀ 01548908
Գլխավոր քարտուղար _____Ա. Թովմասյան	Տնօրեն՝ _____Տ. Ղևոնդյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1

ԿԿ-ԳՀԱՊՁԲ-20/21-8 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը **	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը***
26	48611300 /501	Տվյալների պահպանման համակարգ	Synology/Synology RS3617xs+	Տեսակը՝ պահարանում տեղադրվող, Պրոցեսոր՝ Intel® Xeon®, առնվազն 6 միջուկ, 12 հոսք, հաճախականությունը՝ առնվազն 3.6 Գhg, հիշողությունը՝ առնվազն 12Մբ, հաշվարկային հզորույթուն՝ առնվազն 45Վտ:, Սարքավորումների կոդավորման մեխանիզմ՝ Այո (AES-NI), Օպերատիվ հիշողություն՝ ECC UDIMM 8 ԳԲ DDR4 ծավալով (մինչև 64 ԳԲ մեծացնելու հնարավորությամբ), Համատեղելի սկավառակի տեսակը՝ 12 սկավառակ 3,5" կամ 2,5" SATA, Ներքին առավելագույն ընդհանուր ծավալ՝ 168 ՏԲ (12 x 14 ՏԲ HDD), Նախապես տեղադրված HDD՝ առնվազն 6 հատ 10ՏԲ ծավալով, Պինդ մարմնային կուտակիչի /SSD/ տեղադրման հնարավորություն, Նախապես տեղադրված լրացուցիչ արագագործ քարտ՝ առնվազն 10GbE SFP + սերվերի համար նախատեսված 2 բնիկով:, Քարտի համապատասխանություն՝, IEEE 802.3ae 10Gbps Ethernet, IEEE 802.3ad Link Aggregation, CPU	հատ	9900000	9900000	1	Ք. Երևան Արշակունյաց 7	1	Համաձայնագրի հաշվառման պահից սկսած 20 օրյա ժամկետում

				Offload (RDMA over Ethernet), Քարտի շինայի միջերես՝ համատեղելիություն PCIe 3.0 և 2.0-ի հետ , Փոխանցիչ /Transceiver/՝ 2 հատ, 10 գիգաբիթ փոխանցիչով, աջակցում է 10 գիգաբիթ SR- ին, ստանդարտ ՝ ապահովելով 10-Գիգաբիթի միացում մինչև, 300 մ բազմամոդ մանրաթելով, Տեսակը՝ բազմամոդ, Ալիքի երկարություն՝ 850 նմ, Փոխանցիչի չափսը՝ SFP+, Բնիկներ՝ 1 LC 10-GbE port (IEEE 802.3ae Type 10Gbase-SR); Duplex: full only, Միացման տիպ՝ LC, Միացման մալուխի տիպ՝ 62.5 / 125 մկմ կամ 50/125 մկմ (միջուկ / ծածկույթ) տրամագիծ, աստիճանավորված ինդեքս, մուլտիմոդային մանրաթել, համապատասխանեց նելով ITU-T G.651 և ISO / IEC 793-2- հետ, համապատասխան A1b կամ A1a տիպի, Ուղիղ միացման մալուխ՝ Direct Attach Cable 3-5մ, Մուլտիմոդ-օպտիկամանրաթել-մալուխ՝ LC-LC, 10 Գբ օպտիկամանրաթելայ ին մալուխ, LC / LC, բազմաֆունկցիոնալ - 3 մետր (62.5 / 125 կամ 50/125 տեսակի, Բնիկներ, Արտաքին բնիկ՝ 2 USB 3.0 բնիկ, 2 ընդլայնման բնիկ (Infiniband), LAN բնիկ՝ 10GbE RJ-45 (10 GBase-T) - 2 հատ, 1GbE RJ-45 - 4 հատ:, PCIe 3.0 անցք x 8հատ՝ Երկուսը աշխատում է x8 ռեժիմով, երկուսը 10GbE ցանցային քարտերի միացման աջակցություն, Wake on LAN / WAN՝ Այո, Շրջակա միջավայրի պաշտպանություն՝ Էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումների մեջ վտանգավոր նյութերի առկայության							

				պահանջներին համապատասխան (RoHS), Սերտիֆիկացիա՝ FCC: դաս A, CE: դաս A, BSMI: դաս A, Ցանցային արձանագրություններ ՝ SMB, AFP, NFS, FTP, WebDAV, CalDAV, iSCSI, Telnet, SSH, SNMP, VPN (PPTP, OpenVPN ™, L2TP), Միացումներ և կոճակներ՝, Սնուցման կոճակ և ցուցիչ՝ Այո, Ձայնային ազդանշանի անջատման կոճակ՝ Այո, HDD կարգավիճակի ցուցիչ՝ Այո, Կոշտ սկավառակի սկուտեղ՝ 12 հատ, Սնուցման աղբյուրի պորտ՝ 2 հատ, PSU ցուցիչ և ձայնային ազդանշանի անջատման կոճակ՝ 2 հատ, Սնուցման աղբյուրի օդափոխիչ՝ 2 հատ, Կոնսոլի բնիկ՝ Այո, 1GbE RJ-45 բնիկ՝ 4 հատ, 10GbE RJ-45 (10GBase-T) բնիկ՝ 2 հատ, USB 3.0 բնիկ՝ 2 հատ, Ընդարձակման բնիկ՝ 2 հատ, PCIe 3.0 բնիկ՝ 2 հատ, Վերագործարկեք կոճակ՝ Այո, Կառավարում, Մեկ ծավալի առավելագույն չափը ՝ 108 TB / 200 TB (պահանջվում է առնվազն 32 GB RAM, միայն RAID 5 կամ RAID 6 բլոկի դեպքում);, ներքին ծավալի առավելագույն քանակը ՝ 1,024 տոմ, առավելագույն iSCSI ՝ 128, առավելագույն iSCSI LUN: 512, RAID, RAID աջակցում՝ Basic, JBOD, RAID 0, RAID 1, RAID 5, RAID 6, RAID 10, Թույլտվություններ՝ Windows ACL- ի աջակցություն, Վիրտուալացման աջակցություն՝ VMware vSphere 6 , Microsoft Hyper-V, Citrix, OpenStack Cinder, Կատալոգային ծառայություն Windows AD ինտեգրում. Դոմենի օգտագործողի մուտք							

				Samba (SMB) / AFP / FTP / File Station, LDAP ինտեգրացիա, Անվտանգություն՝ FTP-ով SSL / TLS անվտանգություն, ավտոմատ IP արգելափակում, կոդավորված ցանցային կրկնօրինակում Rsync- ի միջոցով, HTTPS արձանագրության միջոցով միացում, Ծառայողական ծրագրեր՝ Web Assistant, Cloud Station Drive, Cloud Station Backup, Cloud Sync Decryption Tool, Evidence Integrity Authenticator, Photo Station Uploader, ֆոտոնկարների դիսպեչեր Vmware-ի համար, ֆոտոնկարների դիսպեչեր Windows-ի համար, պլագին NFS VMware VAAI-ի համար, Հակավիրուս՝Համակարգի ամբողջական սկանավորում, սկանավորման ժամանակացույց, սպիտակ ցանկ, վիրուսի սահմանման ավտոմատ թարմացում, Cloud Station Server՝ միաժամանակ ֆայլերի փոխանցումների առավելագույն քանակը: 2000, ջնջված ֆայլերի պահպանում, Ներբեռնում՝ ներբեռնման արձանագրություններ ը: BT / HTTP / FTP / NZB / eMule; Բեռնման առավելագույն միաժամանակյա առաջադրանքների քանակ '80, Տեսադիտարկում՝ առավելագույն IP տեսախցիկների քանակը ՝ 90 (ընդհանուր 2,700 FPS, 720p, H.264):, VPN սերվեր ՝ առավելագույն միացման քանակ 30. Աջակցված VPN արձանագրություններ . PPTP, OpenVPN ™, L2TP, Այլ փաթեթներ՝ Ֆոտոկայան, աուդիո կայան, iTunes®							

				սերվեր, երրորդ կողմի փաթեթներ, Մուտքի լարում՝ 100-240 VAC, Հաճախականություն՝ 50/60 Հg, մեկ ֆազ, Աշխատանքային ջերմաստիճան 5 ~ 35 ° C (40 ~ 95 ° F), Պահպանման ջերմաստիճանը -20 ° C- ից 60 ° C, Հարաբերական խոնավությունը 5% 95%, Չափս (H x W x D)՝ 85-90 մմ X 430-440 մմ X 690-700 մմ, Քաշը՝ 14-15 կգ, Համապատասխան ծրագրային ապահովման CD սկավառակ (ներ) և փաստաթղթեր, էլեկտրական հոսանքին և սարքերը իրար միացնող համապահասխան լարեր:, Վերը նշված տեխնիկական բնութագրով համակարգիչի բոլոր բաղադրատարրերը պետք է լինեն նոր, և գործարանային արտադրության:, Լրացուցիչ պայմաններ՝ , Բոլոր սարքավորումները պետք է լինեն նոր, կոմպլեկտավորումը և փաթեթավորումը գործարանային: Երաշխիքային ժամկետն առնվազն 3 տարի: Արտադրողից նամակ-երաշխավորագիր կամ երաշխիքային սպասարկման ապահովում նույն արտադրողի ՀՀ-ում պաշտոնական սպասարկման կենտրոնում /բնութագրում նշվում է սպասարկման պաշտոնական սպասարկման կենտրոնի հասցեն:, Բեռնաբարձումը, առաքումը, տեղափոխումը (պահանջված հասցեով) և բեռնաթափումը կատարվում է Մատակարարի միջոցների հաշվին							
27	48821200 /501	Սերվեր	Super micro/ AS-2013S-	Համակարգչային Սերվեր : 2U բարձրությամբ, նախատեսված սերվերային պահարանում	հատ	8400000	16800000	2	Ք. Երևան Արշակ	2	Համաձայնագրի հաշվ

			COR	տեղադրելու համար, նվազագույնը՝ 1 պրոցեսսորի տեղակայման հնարավորությամբ: Սերվերի կոմլեկտացիան պետք է ներառի պահարանում տեղադրելու համար անհրաժեշտ ռելսերը: Պրոցեսսորը : քանակը՝ մեկ հատ: նվազագույն հաճախականությունը 2.0 Գhg, Տուրբո ռեժիմում՝ 3.0Գhg AMD EPYC 7551P: Միջուկների քանակը՝ առնվազն 32: Հոսքերի քանակ՝ առնվազն 64: Քեշ հիշողության ծավալը՝ 64 ՄԲ և ավել: Օպերատիվ Հիշողությունը : Սերվերը պետք է ունենա նվազագույնը 8 հատ հիշողության մոդուլ տեղադրելու սլոտներ՝ նվազագույնը 1ՏԲ ավելացնելու հնարավորությամբ: Պետք է համալրված լինի 8 հատ 32ԳԲ DDR4 ECC REG DIMM, նվազագույնը՝ 2666 ՄՀg, CL19 1.2V, RANK 2 օպերատիվ հիշողության մոդուլներով: Սերվերի վրա ներկառուցված անհրաժեշտ սարքավորումները : SATA-3 6 Gbps Broadcom 3008 SAS3 (12 Gbps) controller կամ համարժեք RAID 0, 1, 10 աջակցությամբ: Կառավարման պլատֆորմի ինտերֆեյս՝ virtual media over LAN and KVM-over-LAN աջակցությամբ: Լոկալ ցանցի կոնտրոլեր՝ Intel® I210 Controller կամ համարժեք: Ներկառուցված գրաֆիկական ադապտեր Համալրման պարտադիր սլոտները : առնվազն 3 հատ PCI-E 3.0 x16 (low profile); առնվազն 3 հատ PCI-E 3.0 x8 (low profile): Առնվազն 1 հատ M.2 PCI-E 3.0 x4 NVMe					ունյաg 7		առմա ն պահի g սկսած 20 օրյա ժամկե տում

				based, Form Factor: 2280, 22110 կամ համարժեք: Կոշտ սկավառակներ : Սերվերը պետք է ապահովի նվազագույնը 8 հատ տաք փոխարինմամբ 3.5" SAS3/SATA3 Drive Bays և 2 հատ ֆիքսված 3.5" կոշտ սկավառակների զամբյուղներով: Սերվերը պետք է համալրված լինի նվազագույնը 4 հատ 3.5 ՝ 16ՏԲ, SAS3 7.2K RPM 256MB 512e/4Kn կամ համարժեք սկավառակներով: Սերվերը պետք է համալրված լինի առնվազն 1 հատ SSD 512GB M.2 NVMe Write speed 2300 MBytes/sec և Read speed 3500 MBytes/sec կամ համարժեք սարքով: Մուտքի/Ելքի պորտերի նվազագույն պահանջները : 8 հատ SATA3 (6 Gbps) / 8 հատ SAS3 (12 Gbps) ports via Broadcom 3008 կամ համարժեք կոնտրոլերով: 2 հատ 1GbE LAN ports և 1 հատ RJ45 Dedicated IPMI LAN port կառավարման հանգույցի աջակցության համար: 3 հատ USB 3.0 ports, 2 հատ USB 2.0 ports, 1 հատ VGA port, 1 հատ COM port, 2 հատ SATA DOM power connector և TPM 1.2 header Հոսանքից սնուցումը : սերվերը պետք է համալրված լինի առնվազն 2 հատ 740WT Platinum Certified 80Plus 94% էֆֆեկտիվությամբ կամ համարժեք ստանդարտի, տաք փոխարինվող հոսանքի սնուցման աղբյուրներով: Երաշխիքը : 1 տարի Համապատասխան ծրագրային ապահովման CD սկավառակ (ներ) և փաստաթղթեր, էլեկտրական հոսանքին և սարքերը իրար միացնող համապահասխան							

				լարեր: Վերը նշված տեխնիկական բնութագրով բաղադրատարրերը պետք է լինեն նոր, և գործարանային արտադրության: Լրացուցիչ պայմաններ՝ Երաշխիքային ժամկետն առնվազն 1 տարի: Երաշխիքային սպասարկման ապահովում նույն արտադրողի ՀՀ-ում պաշտոնական սպասարկման կենտրոնում /բնութագրում նշվում է սպասարկման պաշտոնական սպասարկման կենտրոնի հասցեն:							

** Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

*** Եթե հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում են «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը » սյունակը: Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:*

**** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

**** Արտադրողից նամակ-երաշխավորագիր կամ երաշխիքային սպասարկման ապահովում նույն արտադրողի ՀՀ-ում պաշտոնական սպասարկման կենտրոնում /բնութագրում նշվում է սպասարկման պաշտոնական սպասարկման կենտրոնի հասցեն: Բեռնաբարձումը, առաքումը, տեղափոխումը (պահանջված հասցեով) և բեռնաթափումը կատարվում է Մատակարարի միջոցների հաշվին***

*****Պարտադիր պայման՝ ապրանքը չպետք է լինի օգտագործված, գործարանային արտադրության***

******Ապրանքի տեղափոխումը և տեղադրումը պահեստ կատարվում է մատակարարի կողմից***

******* Ապրանքը պետք է արտարված լինի ՀՀ-ում ընդգրկող տարածաշրջանում սպառման և սպասարկման համար***

ԳՆՈՐԴ

Կադաստրի կոմիտե
Արշակունյաց 7
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
հ/հ 900013220042
ՀՎՀՀ 02534328

Գլխավոր քարտուղար ----------Ա. Թովմասյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

Սմարթլայն ՍՊԸ
Ք. Երևան Վարդանանց 110
Հայէկոնոմբանկ ԲԲԸ
Հ/Հ 163007031509
ՀՎՀՀ 01548908

Տնօրեն _____ Տ. Ղարիբյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
ԿԿ-ԳՀԱՊՁԲ-20/21-8 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
ԿԿ-ԳՀԱՊՁԲ-20/21-8 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

30.09.20թ.կնքված թիվ ԿԿ-ԳՀԱՊՁԲ-20/21-8 համակարգչային սարքավորումների ձեռքբերման պայմանագրի վճարման ժամանակացույցը հաստատելու մասին

ք. Երևան 08.10.2020թ.

Կադաստրի կոմիտեն (այսուհետ՝ կոմիտե), ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Թովմասյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ պատվիրատու), մի կողմից և « Սմարթլայն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Տ. Ղարիբյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 2020 թվականի սեպտեմբերի 30 -ին կնքված համակարգչային սարքավորումների ձեռքբերման թիվ ԿԿ-ԳՀԱՊՁԲ-20/21-8 պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) 3.3 և 8.12 կետերով սահմանված պահանջները, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով պայմանագրի 3.3 և 8.12 կետերով սահմանված պահանջները՝ հաստատել պայմանագրի 1.1 կետով նախատեսված՝ համակարգչային սարքավորումների ձեռքբերման վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

1.2 Ապրանքի դիմաց վճարումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության (պայմանագրի թիվ 2 հավելված) հիման վրա՝ սույն համաձայնագրի հավելվածով հաստատված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, սակայն ոչ ուշ, քան 2020թ.-ի դեկտեմբերի 25-ը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում հաշվառման պահից, գործում է մինչև կողմերի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ավարտը և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի կողմից պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելվածը կազմված է 1 էջից և համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ
Կադաստրի կոմիտե
Արշակունյաց 7
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
h/h 900013220042
ՀՎՀՀ 02534328

Գլխավոր քարտուղար ----------Ա. Թովմասյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
Սմարթլայն ՍՊԸ
Ք. Երևան Վարդանանց 110
Հայէկոնոմբանկ ԲԲԸ
Հ/Հ 163007031509
ՀՎՀՀ 01548908

Տնօրեն՝ ----------Տ. Ղարիբյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
ԿԿ-ԳՀԱՊՁԲ-20/21-8 ծածկագրով համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**			
			Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Ընդամենը
26	48611300 /501	Տվյալների պահպանման համակարգ	9900000	9900000	9900000	9900000
27	48821200 /501	Սերվեր	16800000	16800000	16800000	16800000

ԳՆՈՐԴ
Կադաստրի կոմիտե
Արշակունյաց 7
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
հ/հ 900013220042
ՀՎՀՀ 02534328

Գլխավոր քարտուղար ----------Ա. Թովմասյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
Սմարթլայն ՍՊԸ
Ք. Երևան Վարդանանց 110
Հայէկոնոմբանկ ԲԲԸ
Հ/Հ 163007031509
ՀՎՀՀ 01548908

Տնօրեն՝ _____ Տ. Ղարիբյան
/ստորագրություն/
Կ.Տ